ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 53-Ա

«02» հուլիսի 2018 թվական

գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂԻՑ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0,12487 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3.1-ին կետի 3-րդ ենթակետի և նույն որոշման հավելվածի 34.1-ի դրույթներով.

ո ր ո շ ու մ եմ

1. Օրինականացնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից Հայաստանի Հանրապետության Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրի 1-ին փողոց, 17 հողամաս հասցեում գտնվող, 08-033-0020-0005 կադաստրային ծածկագրով հողամասի վրա կառուցված, սեփականության իրավունքով իրեն պատկանող 75,12 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ շինությունը:
2. Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:
3. Շինությունը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների

էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՋԵՄՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«02» հուլիսի 2018 թվական
գյուղ Ամասիա